

նենք՝ Սարգսի մասին իմ հաւաքած բաւական ընդարձակ տեղեկութիւններէն:

Անտոնեան Հարց. Մատ. ին մէջ կայ 1677էն նոտրագիր ձեռագիր մը (Թիւ ԻԶ), «Քարոզգիրք Գր. ի Տաթեւացւոյ», քաղուած օրէն հաւաքեալ: Գրիչն է մեր Սարգիսն: Ինչպէս ասոր յիշատակարանէն կ'իմանանք՝ Սարգիս ծնած է 1651ին Վարդապառի օրն, 1669ին Տրապիզոն Աւագ սարկաւագ ձեռնադրուած է, 1672ին Եւդոկիայէն Գաղատիա գացած, եւ այնտեղ Ս. Աստուածածնի վանքը տեղւոյն Առաջնորդ Մինաս Վ. ին (Համթեցի) աշակերտած է: 1673ին Անառակի կիրակին արեղայ ձեռնադրուած է Մինաս Վ. էն, եւ 1674ին Մինաս Վ. ին հետ երուսաղէմ գացած է, եւ Գաղատիա դառնալով տարի մը մնալէն ետեւ՝ 1676ին կրկին երուսաղէմ գացած է եւ Եղիազար կաթողիկոսէն, որ 1671—1682 կը նստէր երուսաղէմ, ձեռնադրուած է Եպիսկոպոս: Սարգիս չի յիշեր վարդապետ ձեռնադրուելու պարագան. սակայն ասոր կրնայ վերաբերիլ այն վկայականը՝ որ պահուած է Հռոմ Վատիկանի մատենադարանը, ինչպէս կը տեսնենք Անտ. Դիւ. ի մէջ պահուած մէկ ցուցակէն՝ «B. 2. Այլ իմն կոնդակ վարդապետական իշխանութեան տուեալ ի Երուսաղէմ ի վանս Սրբոյն Յակոբայ ի Մարտիրոս Վ. էն, առ Թօխաթցի ոմն Սարգիս Վ. :», Վասն զի Մարտիրոս 1667—1683 երկու կամ ըստ այլոց չորս անգամ Պատրիարք եղած է Երուսաղէմ, եւ արդէն 1679ին